600.0383.10.10.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

10 հոկտեմբերի 2018 թվականի №383Ա
ք.Երևան

«ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ԱՆԱՊԱՏ-2» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետը, 23-րդ, 35-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշումը և հաշվի առնելով «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի մայիսի 4-ի հայտը, 2018 թվականի հուլիսի 26-ի, սեպտեմբերի 19-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում (Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի վարչական տարածքում՝ «Անապատ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի շենքին կից կառուցված ճնշումային ավազանից սնվող, (բնական ջրահոսք)) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2036 թվականի ապրիլի 11-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2021 թվականի ապրիլի 11-ը:
2. Հաստատել «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հոկտեմբերի 11-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
10 հոկտեմբերի 2018թ.